ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 324 – Ա 30 հունիսի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 648-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի 2021 թվականի հունիսի 9-ի N 520 տեղեկանքը

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի N 289-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 648-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ 2-րդ կետով հաստատված հավելվածի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

   «4. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ակունք, Բարեկամության փող 1-ին նրբ թիվ 2:»:
2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
3. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսիկ Ավագյանին՝
   1) ապահովել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը՝ կազմակերպության միջոցների հաշվին.

2) կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Մանուկյանին:

30.06.2021

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Կազմված է 30. 06 2021թ.
Բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Վարդենիսի տարածքային
բաժնի կողմից 06.12.2002թ.
գրանցման թիվ 58.210.00296
ՀՎՀՀ 08802751

18.01.2021 թ. գրանցված
կանոնադրության թիվ
փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի
գործակալության կողմից

------- ---------- 2021թ.

Հավելված

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2021 թ հունիսի 30 -ի
N 324-Ա որոշմամբ
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետ

----------Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/փոփոխություն/

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ

«4. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ակունք, Բարեկամության փող□ 1-ին նրբ□ թիվ 2:» ***/փոփ./***: